



180. ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿԻՆԸ

Մըն շատ քյասիր տղա մըն շտընսնված գլեղեցիկ արհիգյ ա օզում, պիրնում տոն: Տրանա ետը տըղան մտածում ա, վըբը քլինի դարիրություն, փող ըխշադի, մինգյել վախում ա: Մին օր էլ կնգանն ասում ա.— Դե ես վըբը ասալ ըմ, հղե պիտի ինիմ, համմա տնւ վըբը քլիննում ըս արսպնիրը, սաղ շենին տղեքլը քեզ ըն եշում, օշրս միշտ դիրետ ա իննական: Կնեգլը թա.— Կարող ըս ըրիւրլին անց կենաս, քլիննա, ես հալալ կաթն ըմ կերալ:

Մարթը իրան տես-տենը յօր ա օնում, դարիրության հղընն փոնում: Եատ ա քլիննում, թա խրեգյ, մին քաղաք ա հսնում, տըեղ իրեք տարե կենում, լավ փող ըխշազում, ետ կյամ շենը: Վըբը հսնում ա շենին տակը, մին հլիվուր մարթ ա պըտահում, ինքը տրան ճընանշում ա, հլիվուրն իրան ճընանշում չի: Տա հըցընում ա, թա էահինշանց տընըցեքլ հունց ըմ արում, էտ հլիվուրն ասում ա.— է՛, հի՛նշ ասեմ, մարթը դարիրություն ա քլիննանլ, կնեգլն էլ շենումը շահիլ չի թողալ, վըբը քշեր ա ասում, վըբը ցիրեկ, միշտ սրա-նրա հետ ա իննում:

էտ խոսկերթը տա վըբը ըսկանում ա, հնեց ա իննում լիհա յիրան ճնիր մաղած ինի Քլիննում ա տոն, կնեգլը շատ ա ուրխանում, կյամ ա փթաքվում, խոււըցնում, տա խոսում չի: Կնեգլը հիշքան ուզում ա վըբը մուտանա, ինքը թողում չի: էքլսը մարթը կնգանն ասում՝ ա եր կաց քլինինքյ: Կնեգլը թա՝ հո՛ր: Մարթը թա՝ հինշ տըեղ վըբը ես կըքլինինիմ: Կնեգլը սուտսփուտ նհետը հղե յա իննում, քլիննում: Եատ ըն քլիննում, թա խրեգյ, մըն ծմակու դրազ

ըն տնու կյամ, ծմակեն կոխկապն էլ մըն մընծ հղե յա անց կենում, հղըցեն քշտին էլ մըն խոր փոս ա իննում: Մարթը մըն զրազ տընդ կնդանը խեխտում ա, պիրնում քցնում էտ փոսը, ըռըխեն էլ մըն քար տիննում, քյիննում տոն:

Մին քանի օրան ետը տընդալ մին սովզաքյարը ա իրան քյըրվանապն անց կենում: Ըննց փոսեն քշտին էլ քյարվանը վըենն ա կենում, վըեր դինչանն: Քյըրվընավուրը նստում ըն, սուփրան վըեր քցնում, հաց օտում: էտ սովզաքյարը քանի հետ հաց, մընս յա օրիշ պեն ա տամ իրան շանը, վըեր օտե, շոնը տանում ա քցնում էտ փոսը: Տու մի ասել, քարեն կոխկապլը ծակ ա իննում մնացած, հենց էտ ծակապն էլ եր ար քցնում: Ըստեղ սովզաքյարը մաննը կոնում ա, ասում ա.—Ես հինչ վըեր տամ ըմ էս շանը, օտում չի, լոխ տանում ա քցնում փոսը, հնլընթ էտ փոսումը մըն պեն կա: Զորս-հենգյ հոթի եր ըն կենում քյիննում փոսեն ըռըխեն քարը յոր օնում, տընսնում մաշին մըն հնլրի-փարի ախճիգյ: Ախճիգյն ասում ա.—Վա՛յ, ես ծընդ մատաղ, ինձ ըստեղաս տոնս կալիքյ: Տահանք քյանդիր ըն քցնում, ախճիգյը իրան կըպոտում ա, ծիքյ ըն տամ, տնու օնում: Ըխճըկանը տանում ըն սովզաքյարեն կոշտը: Սովզաքյարը տրան վըեր տընսնում ա, մնամ ա շիշկյիլված, ըխճըկանն ասում ա.—Ես նգնպ տղա յըմ, էսքան քյարվանը, հարստութունը լոխ իմն ա, եք տու իմ կնեգյըս տընո, էսքան մնլըյ ու ապրանքը լոխ ըոնը կըտընոնա: Ախճիգյըթա.—Ես իմ հալալ մարթըս օնեմ, հարամ մարթն ինձ պետք չի: Սովզաքյարը տրան հիշքան վըեր դաշանք-պղատանք ա անում, տաթա՛ չէ, վըեր չէ՛, ես իմ հալալ մարթըս օնեմ, հարամ մարթն ինձ պետք չի: Սովզաքյարն ասում ա.—Ախեր տու լիհն փոսումը մննական իր մըռնիր, լնվ ա իմ կնեգյըս տընոնաս, էսքան հարստութունն էլ քեզ մնա՛, թն փոսեն մաշին մըռնիր, մընիր ընդըն՞դ: Ախճիգյըթա.—Չէ՛, օզում չըմ: Սովզաքյարը իրան մարթուցն ասում ա.—Դն վըեր օզում չի, տարեքյ նորից քցեցեքյ փոսը, քարը տիրիքյ ըռըխեն: Տահանք էտ ըխճըկանը տանում ըն քցնում փոսը, քարն էլ տիննում փոսեն ըռըխեն, ետ տընոնում, քյիննում:

էտ սովզաքյարեն քյարվանը տընդատ վըեր քոշում ա, մըն քանի օրան ետը մըն օրիշ սովզաքյարը ա իրան քյըրվանապը կյամ տընդալ անց կենում: Էլլա էտ փոսեն քշտին վըենն ըն կենում, վըեր դինչանն: Տահանք տընդ վըեր պեցուր խոսում ըն, էտ ախճիգյը ըսկանում ա, սնս անում, թա եկեքյ ինձ ըստեղաս տնու կալիքյ: Սովզաքյարին մարթիքյը քյիննում ըն քարը փոսեն ըռըխան յոր օնում, քյանդիր քցնում, ախճիգյն իրան կըպոտում ա,

ծիք ըն տամ տնու օնում, եշում տրեսնում մըն շտրեսնված հն-
րի փարի: Տանում ըն սովորաբայնին կոշտը, սովորաբայնն ասում
ա.—էս հի՞նչ հրաշք ա, ես հալա իմ կյանքումըս իստի պեն տրե-
սած չըմ: Մըն խրեզլ վըբր կենում ա, ըխճըկանն ասում ա.—Ես
կենզլ շենեմ, ուզում ըմ փըսակվեմ, հիշքան մտածում ըմ, թզանա
լանվը քթիննական չըմ, եք տու իմ կենզլըս տրեռ, լսւան հարստու-
թունն էլ թեզ ինի, թա չէ, էն ա լիհան փոսումն իր մենական. ըն-
դընդ մըռնիր: Ախճիզը թա՛ չէ՛, ես իմ հալալ մարթըս օնեմ, հա-
րամ մարթը ինձ պետք չի: Սովորաբայնը հիշքան ասում ա, տա
թա չէ, վըբր չէ: Սովորաբայնը կընըվում ա, իրան մարթուցն ա-
սում.—Մըն տրխտակե ղութի շինեցեթլ, տրան տիրեթլ մեշին,
ըռեխը ծըծկեցեթլ, տարեթլ քցեցեթլ ծովը, ծովընն լափուն հինչ
տրեզ կըտանե, թող տանե: Տի յէլ անում ըն:

Ղութին վըբր քցում ըն ծովը, քամե յա պիցրաննում, լափու
տալալ ղութին տանում տնու օնում մըն շենու դրադ: էտ շենան
մին շանիլ տղա միշտ կյամ ար տրեղատ ծնկուն փըռնում, տա-
նում ծախում, տրանալ իրան նան պառավը մորը պահում: Մըն օր
էլ տա թողը եր կալած կյամ ա, վըբր ծնկուն փոնե, եշում ա
տրեսնում ծովընն իրեսեն մըն տրխտակե ղութի լընդ տալիս, լա-
փուն հըռըցընում ա, մինզիլ մուտըցնում: Ղութին վըբր լափ
մուտանում ա, թողը քցում ա, ծիքլ տամ տնու օնում: Ըռեխը
պեննում ա, տրեսնում մեշին մըն շտեսնված հնրի-փարի ախճիզլ,
ասում ա.—Սօրվա իմ վըբրսըս տու վըս, թողըս քցալ ըմ, բախ-
տես տու վըս եկալ, ես էլ անգնի տղա լըմ, մենակ մըն մար օնեմ,
սաղ օրը իրեսըս եր խոսում ա, թա փաակվե. եք տու իմ նշանա-
ծըս տրեռ, թզանա վընչ մին պեն խնայիլ չըմ: Ախճիզը թա՛ չէ՛,
ես իմ հալալ մարթըս օնեմ, հարամ մարթն ինձ պետք չի: Տղան
թա՛ ղե լանվ, վըբր ուզում չըս, եք մըբր տանը կաց, տու իմ քու-
րըս կըտրեանաս, ես էլ քու ախպըրտ, հիբը կօզես, կըթիննաս:
Ախճիզը թա հա՛, էտ պայմանավը կըկյամ: Տղան ըխճըկանը յոր
ա օնում, տանում իրանց տոն: Տրանա ետը թա էտ ըխճըկանը
վընենան ա, թա հինշան ա, էտ տղան վըբր քիննամ ա թա ծու-
կուն փոնե, ծովընն վըսկըռանզլ ծնկնեբը շըտանում ըն, տղան
օրեկան մին քանի հետ փըռնում ա, տանում ծախում, էրկու տըռ-
նանը ետը էնքան հըրուտանում, վըբր էլ ասել չի ինիլ: Վըբր
կյամ ա էրկու տարեն թըմամում, էտ հառհնն ասում ա.—Լանվ,
ես քինիմ շոռ կյամ, իմ մարթըս ու խոխեթլըս քթեննամ: Տղան էլ
թա.—Դե վըբր քիննում ըս, քու վընենըտ պարի յա, քու կյաննալ ետը
փողատար-խըզնատար իմ տրեռալ, հիշքան փող յա վընեկե լըս

օգում, քղնըհետ եր կալ: Տա պագրաստվում ա, վրեր տընդատ
տնու կլն: Մեհետ էլ վրեր քլինում ա թա ծովընն դրադեն շոո
կլն, եշում ա, տընսնում էն էրկու սովդաքյարը նան իրան նշանա-
ծը մըն դրադ տընդ նստած, գրնց ըն անում: Տահանց մուտանում
ա, ասում:—Իրեքան եկեք, քլինինք մընր տոն զոնադ: Տահանք
էլ թա՝ պա մուք քեզ նընանշում չընք, հունց կլա՞նք: Տա թա՝
վընչինչ, կոզի տուք ինձ նընանշում չըք, ես ծըեզ նընանշում ըմ.
վընր կըկյաք տոն, գրնց կանենք, ամմին հինչ կըգլխաք:

Տահանք հղե լըն իննում, էտ հառհենն նհետ քլինում: Վրեր
հանում ըն տոն, հառհեր պըռաՎեն ասում ա.—Տու հաց շինի,
կլինի արնդ պեր, ես տահանց նհետ մըն խրեզյ գրնց օնեմ շնիլի:

էտ պըռաՎեն տղան էլ վրեր կյամ ա, նստում ըն գրնց ա-
նում, ախճիզը հըրցընում ա, թա ծըեր կյանքումը իսկի ծըեր
կըլխավը մըն պեն եկած չի՞, վընր նադլ անեք ըսկանանք: էն
առաշին սովդաքյարն ասում ա.—Մըն քանի տարե սրանա առաշ
ես իմ քլըրՎանավըս քլինում ի իմ երգլիբըս: Հղննի վըննը
կացենք, վընր գինջանանք: Սուսիրան վընր քցեցինք, թա հաց
օտենք, հինչ տամ ի շանըս, մըն մոտե փոս կար, տանում ար
քցում էն փոսը: Ըոբլըեն էլ մըն մընծ քար կար ախրած, մարթ
դրկեցե, քլեցեն քարը եր կալին, տընսեն քըզ մընան մըն շատ
գլեղեցիկ ախճիզյ էտ փոսումը, տնու կալեն պերեն, տրան ըսնցե
եք իմ կենեզըս տընո, էսքան մնչքյն ու ապրանքը, էսքան խաղ-
նան լոխ քեզ ինի: Տա թա՝ չէ՞, ես իմ հալալ մարթըս օնեմ, հա-
րամ մարթը ինձ պետք չի: Տրան նորից քցիլ սվըն փոսը, քարը
քցեցեն յիրան, էլ նրանա հուը գլնդում չըմ թա հի՞նչ տընաՎ:
էն մըն սովդաքյարն էլ ասում ա.—էտ տընեն համան փոսեն
քշտավը ես էլ ըմ իմ քլըրՎանավըս անց կացալ: Վրեր ուղեցալ
ընք, թա տընդ վըննը կենանք, մխըրե գինջանանք, բնրդան էտ
փոսեն մաշան մըն սնս ընք ըսկանում, տա ծեն ա տամ, թա տուք
հինչ մարթիք ըք, եկեք ինձ ըստեղաս տնու կալիք: Մին քանի
մարթ քլինամ ըն քլանդիր քցում, տնու օնում, տընսնում էլլա
քըզմընան մըն շատ գլեղեցիկ ախճիզյ, ասում ըմ եք իմ կընեզըս
տընո, հինչ օնեմ, լոխ քեզ ինի: Տա թա՝ չէ՞, ես իմ հալալ մարթըս
օնեմ, հարամ մարթն ինձ պետք չի: Վերը, տրան տըխտակե դու-
թում տինիլ ըմ տամ, ըոեխը մեխել տամ, քցում ծովը, էլ նրանա
հուը գլնդում չըմ, թա հինչ տընաՎ:

Տրա մարթն էլ ասում ա.—Մըն տընն քլեցալ ըմ դարիբու-
թուն, էրկու տարե կացալ, հոտ տընալ, եկալ մըեր շենը. հալն
շենին տակեն մըն սիպտակ մըքավուր հլիվուրու հըրցընում ըմ,

Թա էսհինչ մարթին տընըցեք, կնեզը, խոխեքը հունց ըն յուլա
 քլիննամ (ես իրան նընանչում ի, ինքն ինձ նընանչում շար), ա-
 սում ա.—Դե մարթը քիցալ ա դարիբութնն, կնեզն էլ շատ գյե-
 դեցիկ ա, վըհչ քշեր ա ասում, վըհչ ցիրեկ, սրա-նրա նհետ շոո
 ա կլամ: Դուզ վըբր կնեզըս թըզ մընան շատ գյեդեցիկ ար, քիցե
 եր կալի, պերի խիխտեցե, համան տըեղեն հըղըցըն զրադեն փո-
 սը քցեցե, քարն էլ տիրի յիրան, էլ գյուդնն չըմ, Թա նրանա հար
 հինչ տընոավ, հինչ շտընոավ:

էտ պըռոավեն տղան էլ ասում ա.—Մըն օր թոռըս եր կալած
 տնուս ըմ կլամ ծովին զրազը, վըբր մըն քանի ծնկուն փըռնեմ,
 տանեմ ծախեմ դարդիս դնըման անեմ: Տընսնամ մըն տըխտակե
 դութի ծովընն մաչին, լափուն հա մուտըցընում ա, հա հըռըցը-
 նում: Վըբր լափ մուտացավ, թոռըս քցեցե, փըռնեցե, բիդի ինձ
 պերե: Քարավ թըխում ըմ զափազը կոտրում, պեց անում, տըես-
 նում էս ախճիգյն ա. ասում ըմ.—Եք իմ կնեզըս տըեո, քու կլան-
 քըտ ըզադողը ես ըմ, տա Թա.—Ես իմ հալալ մարթըս օնեմ, հա-
 րամ մարթն ինձ պետք չի: Ասում ըմ.—Դե՛ լն՛վ՛, վըբր օզում չըս,
 ես քու ախպըբտ կըտըեոնամ, տու էլ իմ քուրըս տըեո, եք քեզ
 տանեմ մըբր տոն, կըկհնաս, հիբը մարթիտ ու խուխոցըտ էըթը-
 թեննամ, կըքլիննամ: Տա Թա էտ պայմանավ կըկլամ: Եկալ ա, էս
 ա էրկու տարե յա մըբր տանը, դե գյուդնն չըմ Թա լիհն տրա
 բախտան ա, Թա հնչա յա, վըբր տրանա հտը քլիննամ ի ծն-
 կուն փըռնեի, ծովընն ծնկունընըն էլ ին շըտացալ, օրական մին
 քանի հետ ըսկըսեցե փըռնեիը, ծըխեցե, էսքան վըեսկուն, խըզ-
 նեն տար տըեոն: Տրանա հտը հառհնը մարթին ասում ա՝ ինձ նը-
 նընչեցեք վո՛ւ, մարթը Թա՛ չէ: Տա Թա ես քու կնեզըս ըմ, մե-
 հենգլ ես ըմ հալալ, Թա տու: Մարթը մնամ ա շիշկիլված: էտ
 էրկու սովզաքյարը Թա՛ հալալ ինի իստի ծծկերը քեզ, եր կալ տար
 խուխոցտ իրեսը տնու կալ: Տահանք ամեքյա մըն խիլլա փոզ ու
 վըեկե յէլ ըն տամ, մարթին ան կնգանը հոե քցո՛ւմ իրանց տոն:

